

եղծուած բնագիրն ու մեր ձեռքով կատարուած թարգմանութիւնը բերում ենք ստորեւ, զետեղուած է հասարակ թղթի մեծագիր մի երեսի վրայ. գրուած է վարժ չղաղրով, առանց ոլորագծերի ու զարդադրերի: Թուղթն ուղղած է մոսկովեան ցարին – Imperator – կայսր–կեսար–ցար), որի անունը չի յիշուած սակայն, նշանակուած չէ նոյնիսկ գրութեան տեղն ու թուականը, բարեբաղդաբար գրուածքը վաւերացրած է կարմրագեղ կնքով, որի մակագրութիւնը. —

«Յի Քի ԾՌՅ ՅԿԲ ԿԹՂՍ ԱՄ ՀՅՅ ԹՎ. ՌՃԴ. (1655)»

«Մատնում է մեզ դոնէ զիմովի անձնաւորութիւնը, կնքի տարեթիւը, 1655, ցոյց է տալիս միայն խնդրարկուի կաթողիկոսութեան առաջին տարին որ կապուին գրութեան ժամանակի հետ: Կարելի է ենթադրել, որ մեր ձեռքը հասած թուղթը հայերէն բնագրի հետ ուղարկուած թարգմանութիւնն է, հակառակ դէպքում նա աւելի պատշաճ ձեւ կունենար, հաւանական է նաեւ այն, որ այդ թարգմանութիւնը պատրաստուած լինի այն կաթողիկ քարոզիչների ձեռքով, որոնց հետ սերտ առնչութիւն ունէր Յակոբ Զուղայեցին 1670–ական թուերին» (էջ 776–7):

Նախ կը տրուի լատիներէն, ապա Ա. Յովհաննիսեանի հայերէն թարգմանութիւնը:

«Անյաղթ Կայսր»

«Սոնարհելով առ ոտս Ձերդ Օգոստոսիան Մեծութեան, ուղղելով դէպի Ամենաբարձրեալն անթիւ մաղթանքներ Ձեր թագաւորական անձի ողջութեան համար եւ՝ հայ եկեղեցու աղերսանքները բովանդակ թագաւորութեանդ անդորր երջանկութեան եւ ներկայիս անսպառ լաղթութիւնների, խաչի թշնամիների տապալման, խորտակման եւ բնաջնջման համար, վստահ լինելով Կայսերական Օգոստոսիանութեանդ թէ՛ դէպի օտարները եւ թէ՛ դէպի տնայիններն ունեցած հաստատ ողորմածութեան վրայ՝ (Ձեզ) եմ մօտենում ծնկաչօք: Եւ ինչպէս Մոսկովեան Ռուսաստանի բոլոր ամենազօր Կայսրները միշտ հանդիսացել են պաշտպան եւ զօրավիգ հաւատի այլ եւ թշնա-

միների բռնութեան հանդէպ՝ հովանի ճնշուածներին, նոյնպէս եւ վայել է Նորին Մեծութեանը, այդ իսկ հերոսների յաջորդին՝ կեանքում եւ թէ՛ դահի վրայ, օգնութեան հասնել մեզ՝ խեղճերիս»:

«Պարսկաստանում մեզ եւ մեր եկեղեցու վրայ պարսից պաշտօնեաների կողմից դրւում են ահա օտարօտի հարկեր եւ մեզ, որ չենք կարողանում մեր չքաւորութեան եւ աղքատութեան շնորհիւ հատուցանել այդ հարկերը, քչւում են դէպի բանդ, չարչարում են, տանջում եւ վերջապէս, որ յետինն է ու զլիաւորը մահաւատականների նպատակների՝ իրանց դաւանանքն են հարկադրում ընդունել: Եթէ այդչափ հալածանքները զրկէին մեզ միայն հարստութիւնից եւ աշխարհային բաւարարումներից, չարիքը փոքր կը լինէր, եւ ես լուծեան կը տայի այդ բայց երբ տեսնում եմ օր օրի վրայ մեր ի Բրիտոս սնուող դաւակները հեռացած (մայրական) ստինքներից, խաբուած պատանիները նաւով հեռանալիս, չափահասներին եւ զիտակցութեան եկածներին ուժով մղուած դէպի յաւիտենական փերկութեան հակառակ դաւանանքը, չը կարողանալով տանել այդքան մեծ կորուստը, ահա, արցունքներ թափելով առ Աստուած՝ Նրա պատկերի առաջ, մօտենում եմ նաեւ իւր թագաւորութեան մէջ Նրա տեղապահ Կայսեր, Ձերդ Մեծութեանը, որպէս զի բարհաճէ օգնել մեզ, խեղճութիւնից ճնշուածներին, և երբ Նորին ամենազօր Մեծութիւնը պարսիկների մօտ դեսպաններ ուղարկելու լինի մի քանի խօսք (ասել)ի պաշտպանութիւն մեր ստացուածքի այլ եւ ... իւր թագաւորական զիւանդակների հրամայէ ազդել: Ռուս իշխանութիւնը մեծ նշանանակութիւն ունի պարսիկների աչքում եւ դուցէ՛ առաջիկայում յաւակնութիւն չունենան այնքան տանջել նրանց, որ ի Բրիտոս Աստուածն ունեցած ընդհանուր հաւատի շնորհիւ, կարող կը լինեն Ձեզ ուղղել իրանց հայեացքը: Որպէս իր սեան զարդի՝ բովանդակ հայ եկեղեցին, ինչպէս նաեւ ես՝ այդ եկեղեցու սպասաւորն ի Բրիտոս, այս ամենախոնարհ խնդիրն արկանում ենք առ ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան»: